ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2016 թ. անգլերենից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն

Երևան 2017

Բովանդակություն

Ներածություն ... 3
1. Ընդհանուր տեղեկություններ ... 4
2. Թեստերի կառուցվածքը ... 4
3. Ստուգատեսի արդյունքների սանդղակավորումը ... 5
4. Մասնակցությունը անգլերենից ազգային ստուգատեսին ... 6
5. Անգլերենից ազգային ստուգատեսի միավորները ... 6
5.1 «Անգլերեն» առարկայի միավորների բաշխման հիստոգրամները ... 6
5.2 Անգլերենից ազգային ստուգատեսի գնահատականների խմբերի տոկոսները .. 7
6. Ստուգատեսի արդյունքները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ... 8
7. Ստուգատեսի արդյունքները ըստ բնակավայրերի տիպերի ... 10
7.1 Մասնակցությունը ... 10
7.2 Միջին միավորները ... 10
8. Ստուգատեսի արդյունքները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ... 11
8.1 Մասնակցությունը ... 11
8.2 Միջին միավորները ... 12
8.3 Առաջադիմության խմբերի տոկոսները ... 16
9. Ստուգատեսի արդյունքները ըստ սեռերի ... 17
9.1 Մասնակցությունը ... 17
9.2 Միջին միավորները ... 18
10. Վերլուծություն ըստ ստուգատեսի թեստերում ընդգրկված առաջադրանքների տիպերի ... 18
11. Վերլուծություն ըստ ստուգատեսի թեստերի բաժինների ... 19
11.1 Քերականություն ... 22
11.2 Բառապաշար ... 22
11.3 Շարադասություն ... 23
11.4 Տեքստի ընկալում ... 23
11.5 Թարգմանություն ... 23
11.6 Թեստերի բաժիններից ստացված միջին արդյունքների կապը շարադրություն գրելու և թարգմանություն կատարելու տնային հանձնարարությունների հաճախության և աշակերտների ինքնագնահատականների հետ ... 24
12. Ամփոփում ... 28

Ներածություն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի 2016 թ. նոյեմբերի 4-ի թիվ 165 Ա/Ը հրամանը՝ 2016 թ. նոյեմբերի 7-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է ազգային ստուգատես «Անգլերեն» առարկայից:

Նպատակը

Անգլերենից ազգային ստուգատեսի (այսուհետ՝ ԱԱՍ) նպատակն է պարզել անգլերենի դպրոցական դասընթացից 8-րդ դասարանի աշակերտների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը, դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության չափերը, ինչպես նաև՝ այդ գիտելիքների կիրառման կարողությունները:

Ընտրանքը

Ստուգատեսի ընտրանքը եղել են ՀՀ հանրակրթական ուսումնական 76 հաստատությունների (13 ավագ, 24 միջնակարգ, 34 հիմնական, 4 ոչ պետական դպրոցների, ինչպես նաև 1 վարժարանի) 8-րդ դասարաններում սովորող 2880 աշակերտները:

Անգլերենից ազգային ստուգատեսի կազմակերպումը

ԱԱՍ-ը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի աշխատակիցների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են ստուգատեսի ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Ազգային ստուգատեսի իրականացման համար նախատեսված ժամանակը եղել է 60 րոպե: Թեստ-գրքույկների 1-ին մասը կազմված է եղել անգլերենի առաջադրանքներից, 2-րդ մասը՝ հարցաթերթից, որում ընդգրկված հարցերը վերաբերել են աշակերտին, նրա նախասիրություններին, դպրոցին և այլն:

Աշակերտների գրավոր աշխատանքները պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մասնագետների կողմից, արդյունքները անցկացվել են

ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Վերլուծության իրականացումը

Վերլուծությունն իրականացվել է Excel, IATA և SPSS ծրագրային փաթեթների կիրառմամբ:

1. Ընդհանուր տեղեկություններ

Անգլերենից ազգային ստուգատեսի արդյունքների և հարցաթերթի վերլուծությունը կատարվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

- **ընդհանուր**, որտեղ ներկայացվել են ՀՀ հանրակրթական հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում սովորողների շրջանում անցկացված ազգային ստուգատեսի ընդհանուր արդյունքները,
- **առարկայական**, որտեղ ներկայացվել է թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների և թեստերում ընդգրկված բաժինների,
- **երկրորդային վերլուծություն**, որտեղ ներկայացվել են ազգային ստուգատեսի ընթացքում անցկացրած հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ և առաջադիմության վրա ազդող գործոնները:

2. Թեստերի կառուցվածքը

Անգլերենից ազգային ստուգատեսի ընթացքում օգտագործվել է 4 թեստային տարբերակ: Թեստերը բաղկացած են եղել ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից: Կարճ պատասխանով առաջադրանքները կազմված են եղել ընդարձակ և ընտրովի պատասխանով ենթատիպերից:

Առաջադրանքների լուծումը պահանջել է 1 կամ 2 քայլ: Ընտրովի պատասխանով և մեկ քայլով լուծվող առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով (համապատասխանաբար՝ սխալ կամ ճիշտ պատասխանի դեպքում), իսկ երկու քայլով լուծվող առաջադրանքները՝ 0, 1 կամ 2 միավորներով (համապատասխանաբար՝ սխալ, մասնակի ճիշտ կամ ճիշտ պատասխանի դեպքում):

Կարճ պատասխանով առաջադրանքների լուծման համար սովորաբար պահանջվում է, որ աշակերտը գրի մեկ քանի բառ, կամ նախնական ընտրությունից հետո գրի կարճ պատասխան:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ազգային ստուգատեսի թեստերի կառուցվածքը ըստ առաջադրանքների տիպերի:

Աղյուսակ 1. Ազգային ստուգատեսի թեստերի կառուցվածքը

Առաջադրանքների տիպերը	Առաջադրանք-ների քանակը	Հնարավոր առավելագույն նախնական միավորը
Ընտրովի պատասխանով	12	12
Կարճ-ընդարձակ	6	21
Կարճ-ընտրովի	2	4
Ընդամենը	**20**	**37**

3. Ստուգատեսի արդյունքների սանդղակավորումը

Ընտրովի պատասխանով առաջադրանքները և կարճ պատասխանով մեկ առաջադրանք գնահատվել են 0 կամ 1 միավորներով: 4-րդ, 6-րդ, 12-րդ, 16-րդ և 20-րդ կարճ պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0, 1 կամ 2 միավորներով: Նույն կերպ են գնահատվել նաև 13-րդ և 17-րդ կարճ պատասխանով առաջադրանքների ենթաառաջադրանքները (13-րդի առավելագույն նախնական միավորը եղել է 8, 17-րդինը՝ 6):

Գրավոր աշխատանքի գնահատումը կատարվել է Z սանդղակով, որի միավորները գծային արտապատկերմամբ տեղափոխվել են գնահատման 1-10 միավորների սանդղակ:

Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված բանաձևի՝

$$Z_{10}=1+9*((Z_i - Z_{min})/(Z_{max} - Z_{min})),$$

որտեղ՝ Z_{10}-ը միավորն է 10-միավորանոց սանդղակում, Z_i-ն՝ i-րդ մասնակցի միավորը Z սանդղակում, Z_{max}-ը՝ Z սանդղակում դիտարկված առավելագույն միավորը, Z_{min}-ը՝ նվազագույն միավորը:

4. Մասնակցությունը անգլերենից ազգային ստուգատեսին

Աղյուսակ 2–ը ցույց է տալիս ԱԱՍ-ին մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակի և աշակերտների թվի ընդհանուր ցուցանիշները, ինչպես նաև բաշխվածությունն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Աղյուսակ 2. Անգլերենից ազգային ստուգատեսին մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակը և աշակերտների թիվը

Վարչատարածքային միավորները	Հանրակրթական ուսումնական հաստատություն-ների քանակը	Մասնակիցների		ՄԻջին միավորը	Ստանդարտ շեղումը	Ստանդարտ սխալը
		թիվը	տոկոսը			
ՀՀ	**77**	**2880**	**100**	**5.2**	**1.841**	**0.034**
Այդ թվում՝						
Երևան	22	1163	40.4	5.7	1.838	0.054
Արագածոտն	5	134	4.6	4.3	1.658	0.143
Արարատ	6	168	5.8	4.1	1.955	0.151
Արմավիր	6	182	6.3	4.8	1.705	0.126
Գեղարքունիք	8	217	7.5	5.2	1.728	0.117
Լոռի	4	139	4.8	4.8	1.215	0.103
Կոտայք	3	166	5.8	5.0	1.933	0.150
Շիրակ	8	255	8.9	4.7	1.470	0.092
Սյունիք	6	178	6.2	4.7	1.768	0.132
Վայոց ձոր	6	149	5.2	5.2	1.973	0.162
Տավուշ	3	129	4.5	4.6	1.608	0.142

5. Անգլերենից ազգային ստուգատեսի միավորները

5.1 «Անգլերեն» առարկայի միավորների բաշխման հիստոգրամները

Դիագրամ 1-ում ներկայացված է «Անգլերեն» առարկայի միավորների բաշխումը 10 միավորանոց սանդղակում, դիագրամ 2-ում՝ նախնական միավորների բաշխումը:

Դիագրամ 1. Անգլերենի սանդղակավորված միավորների բաշխումը



Դիագրամ 2. Անգլերենի նախնական միավորների բաշխումը



Դիագրամներից երևում է, որ 10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համեմատաբար համաչափ է՝ փոքր-ինչ շեղված դեպի ցածր միավորները: Նախնական միավորների բաշխումն ավելի մանրամասն է ցույց տալիս դեպի ցածր միավորների կողմ շեղումը: Հնարավոր առավելագույն՝ 37 նախնական միավորից ստուգատեսի մասնակիցների հավաքած առավելագույն միավորը եղել է 34-ը:

5.2 Անգլերենից ազգային ստուգատեսի գնահատականների խմբերի տոկոսները

Դիագրամ 3-ում պատկերված է 10 միավորանոց սանդղակում 1-3 («անբավարար»), 4-5, 6-8 և 9-10 («գերազանց») գնահատականների տոկոսային բաշխումը:

Դիագրամ 3. Ստուգատեսի գնահատականների խմբերի տոկոսները



6. Ստուգատեսի արդյունքները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Դիագրամ 4-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են ԱԱՍ-ի միջին միավորները:

Դիագրամ 4. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



Դիագրամից երևում է, որ ընդհանուր միջին միավորից (5.2) բարձր է միայն Երևանից ԱԱՍ-ին մասնակցած աշակերտների (բոլոր մասնակիցների 40.4%-ը) միջին միավորը (5.7): Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի մասնակիցների միջին միավորները հավասար են ընդհանուր միջինին, իսկ մնացած մարզերինը ցածր են:

Աղյուսակ 3-ում ըստ վարչատարածքային միավորների ներկայացված են ԱԱՍ-ի արդյունքների վիճակագրական տվյալները, որում 1-3, 4-5, 6-8 և 9-10 գնահատականների միջակայքերի համար բերված են նաև մասնակիցների թվերը և տոկոսները:

Աղյուսակ 3. ԱԱՍ-ի արդյունքների վիճակագրական տվյալները ըստ գնահատականների խմբերի

Վարչատարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Առավելագույն միավորը	Նվազագույն միավորը	Միջին միավորը	1 – 3 միավորներ հավաքած մասնակիցների		4 և 5 միավորներ հավաքած մասնակիցների		6 – 8 միավորներ հավաքած մասնակիցների		9 և 10 միավորներ հավաքած մասնակիցների	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
ՀՀ	2880	10	1	5.2	495	17.2	1127	39.1	1169	40.6	89	3.1
Երևան	1163	10	1	5.7	117	10.1	394	33.9	574	49.4	78	6.7
Արագածոտն	134	9	1	4.3	35	26.1	70	52.2	28	20.9	1	0.7
Արարատ	168	9	1	4.1	65	38.7	64	38.1	38	22.6	1	0.6
Արմավիր	182	8	1	4.8	41	22.5	74	40.7	67	36.8		
Գեղարքունիք	217	10	1	5.2	30	13.8	82	37.8	103	47.5	2	0.9
Լոռի	139	8	2	4.8	22	15.8	78	56.1	39	28.1		
Կոտայք	166	9	1	5.0	35	21.1	61	36.7	68	41.0	2	1.2
Շիրակ	255	9	1	4.7	46	18.0	131	51.4	77	30.2	1	0.4
Սյունիք	178	8	1	4.7	44	24.7	63	35.4	71	39.9		
Վայոց ձոր	149	9	1	5.2	30	20.1	51	34.2	64	43.0	4	2.7
Տավուշ	129	8	1	4.6	30	23.3	59	45.7	40	31.0		

Դիագրամ 5. Գնահատականների խմբերի տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



Դիագրամ 5-ում տեսնում ենք, որ «գերազանց» և 6-8 գնահատականների ամենաբարձր տոկոսներն (6.7% և 49.3%) արձանագրվել են երևանցի մասնակիցների շրջանում: Նրանց «անբավարար» գնահատականների տոկոսն (10.1%) ամենացածրն է ՀՀ-ում: Մարզերից «անբավարար» գնահատականների ամենացածր տոկոս (13.8%) է արձանագրվել Գեղարքունիքում, «գերազանց» գնահատականների ամենաբարձր տոկոս (2.5%)՝ Վայոց ձորում: Արմավիրի, Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերից մասնակցածները «գերազանց» գնահատականներ չեն ստացել:

7. Ստուգատեսի արդյունքները ըստ բնակավայրերի տիպերի

7.1 Մասնակցությունը

Ստորև ներկայացված դիագրամից երևում է, որ ԱԱՍ-ի մասնակիցների 50%-ը եղել է խոշոր քաղաքներից: Գյուղաբնակները կազմել են մասնակիցների գրեթե 11%-ը:

Դիագրամ 6. Մասնակցությունը ըստ բնակավայրերի տիպերի (%)



7.2 Միջին միավորները

Ըստ բնակավայրերի տիպերի միջին արդյունքները նշանակալիորեն տարբեր են միմյանցից: Դա նշանակում է, որ բնակավայրի տիպն էապես ազդում է արդյունքների վրա:

Դիագրամ 7-ից երևում է, որ խոշոր քաղաքներից ԱԱՍ-ին մասնակցածների միջին միավորները եղել են ամենաբարձրը (5.5):

Դիագրամ 7. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի



Միջինից զգալիորեն ցածր են եղել փոքր քաղաքներից և հատկապես բարձր լեռնային գյուղերից մասնակցածների միջին արդյունքները: Վերջինները կազմել են մասնակիցների 0.6%-ը և ցուցաբերել են ամենացածր միջին արդյունք (3.0):

8. Ստուգատեսի արդյունքները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

8.1 Մասնակցությունը

Դիագրամ 8-ում ներկայացված են ԱԱՍ-ի մասնակիցների տոկոսներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:

Դիագրամ 8. Մասնակցությունը ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (%)



Դիագրամից երևում է, որ ԱԱՍ-ի ընտրանքը կազմված է եղել առավելապես հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներում սովորողներից՝ հիմնական դպրոցների ակնհայտ գերակշռությամբ (59%):

Դիագրամ 9-ում ներկայացված է մասնակցության պատկերն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Դիագրամ 9. Մասնակցությունը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (%)



Դիագրամ 9-ում երևում է, որ ամենուրեք, բացառությամբ Լոռու, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերի, գերակշռել են հիմնական դպրոցներից ԱԱՍ-ին մասնակցած աշակերտները: Լոռու մարզից մասնակցել են միայն ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտները: Ոչ պետական ուսումնական հաստատություններից մասնակցածները եղել են Երևանից, Արմավիրի և Շիրակի մարզերից, իսկ վարժարանից մասնակցածները՝ միայն Երևանից:

8.2 Միջին միավորները

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի միջին միավորների պատկերը ներկայացված է դիագրամ 9-ում, որից երևում է, որ ավագ, հիմնական և միջնակարգ դպրոցներից ԱԱՍ-ին մասնակցած աշակերտների միջին միավորները մոտ են եղել միմյանց (4.8-5.1) և ընդհանուր միջին միավորին զիջել են 0.1-0.4 միավորով: Մասնակից միակ վարժարանի և ոչ պետական ուսումնական հաստատությունների փոքրաթիվ սովորողների միջին միավորները 1.8-2.4 միավորով գերազանցել են ընդհանուր միջին միավորին (համապատասխանաբար՝ 7.6 և 7.0):

Դիագրամ 10. Միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի



Դիտարկված ամենացածր միջին միավորը եղել է 4.8-ը (ավագ դպրոցներ):

Ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ավելի մանրամասն դիտարկելով միջին արդյունքները՝ դիագրամ 11-ում կարելի է տեսնել, որ ընդհանուր միջինից բարձր միջին արդյունքներ են ցուցաբերել Կոտայքի և Շիրակի մարզերից ԱԱՍ-ին մասնակցած ավագ դպրոցների, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերից՝ միջնակարգ դպրոցների, Երևանից և Վայոց ձորի մարզից՝ հիմնական դպրոցների աշակերտները:

Դիագրամ 11. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի



Ոչ պետական ուսումնական հաստատություններով ներկայացված են եղել Երևանը, Արմավիրի և Շիրակի մարզերը: Վերջինիս միջին միավորը եղել է ամենացածրը (5 մասնակից, միջին միավորը՝ 2):

Դիագրամ 12-ում ըստ հանրակրթական ուսումնական հաստատության տիպերի ներկայացված է յուրաքանչյուր մասնակից հաստատության միջին միավորի դիրքը ընդհանուր միջին միավորի (10 միավորանոց սանդղակով՝ 5.2) նկատմամբ: Միջին միավորները դասավորված են աճման կարգով: Ըստ նշված հաստատությունների տիպերի ներկայացված են ամենաբարձր և ամենացածր միջին միավորները:

Դիագրամ 12. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի բաշխումը ըստ միջին միավորների



Ավագ դպրոցների ամենաբարձր միջին միավորը եղել է 5.6, ամենացածրը՝ 3.4, միջնակարգ դպրոցներինը, համապատասխանաբար՝ 7.3 և 3, հիմնական դպրոցներինը՝ 6.3 և 2.5, ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններինը՝ 8 և 2: Մասնակից 13 ավագ դպրոցներից ԱԱՍ-ի ընդհանուր միջին միավորին գերազանցած կամ հավասար միջին արդյունքներ են ցուցաբերել 4 դպրոցներում (30.8%) սովորողները, 24 միջնակարգներից՝ 9-ինը (37.5%), 34 հիմնականներից՝ 13-ինը (38.2%) և 4 ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից՝ 3-ինը (75%): Մասնակից միակ վարժարանում սովորողների միջին միավորը եղել է 7.6:

Ասպիսով, ստուգատեսին մասնակցած 76 հանրակրթական ուսումնական հաստատություններից 45-ի (59.2%) միջին միավորները ցածր են եղել ընդհանուր միջին միավորից: Դիտարկվել են ակնհայտ առանձնացող «ուժեղ» և «թույլ» դպրոցներ:

Աղյուսակ 4-ում ներկայացված են անգլերենից բարձր արդյունքներ ցուցաբերած լավագույն 10 դպրոցները:

Աղյուսակ 4. ԱԱՍ-ից ամենաբարձր միջին արդյունք ցուցաբերած հանրակրթական ուսումնական հաստատությունների լավագույն տասնյակը

№	ԱԱՍ-ին մասնակցած դպրոցներ	Վարչա-տարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Նվազագույն միավորը	Առավելագույն միավորը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
1	**«Հայ կրթություն» կրթական հիմնադրամ**	Երևան	14	5	10	**8.0**	1.273
2	**«Ուսում» հանրակրթական դպրոց**		38	6	10	**7.8**	1.230
3	**Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ դպր.**		84	5	10	**7.6**	1.338
4	**Արտաբույնքի միջնակարգ դպրոց**	Վայոց ձորի մարզ	13	6	8	**7.3**	0.619
5	**Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց**		17	5	9	**7.1**	1.247
6	**Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոց**	Գեղարքունիքի մարզ	19	5	8	**6.4**	0.833
7	**Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց**		37	4	8	**6.4**	0.935
8	**Երևանի թիվ 8 հիմնական դպրոց**	Երևան	110	1	10	**6.3**	1.692
9	**Երևանի թիվ 19 հիմնական դպրոց**		132	1	10	**6.3**	1.905
10	**Երևանի թիվ 89 հիմնական դպրոց**		117	3	10	**6.1**	1.439

Ինչպես երևում է աղյուսակից, լավագույն տասնյակում ընդգրկված ուսումնական հաստատությունները Երևանից, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերից են: Միջին միավորները բաշխված են 6.1-8 միջակայքում: Նշվածներից 7 ուսումնական հաստատությունների արդյունքներում «անբավարար» գնահատականներ չեն դիտարկվել: Ի դեպ, այդպիսիք չկան նաև լավագույն տասնյակում «չտեղավորված» Ապարանի թիվ 1 (Արագածոտնի մարզ, միջին միավորը՝ 5.9), Մրգաշատի թիվ 1 (Արմավիրի մարզ, միջին միավորը՝ 5.6) և Կապանի թիվ 10 (Սյունիքի մարզ, միջին միավորը՝ 6.1) միջնակարգ դպրոցների արդյունքներում:

Աղյուսակ 5-ում ներկայացված է անգլերենից ամենացածր արդյունքներ ցուցաբերած դպրոցների տասնյակը:

Աղյուսակ 5. ԱԱՍ-ից ամենացածր միջին արդյունք ցուցաբերած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը

№	ԱԱՍ-ին մասնակցած դպրոցներ	Վարչատարածքային միավորը	Մասնակիցների թիվը	Նվազագույն միավորը	Առավելագույն միավորը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
1	**«Իմպրոմիթ» միջնակարգ դպրոց**	Շիրակի մարզ	5	1	3	**2.0**	0.930
2	**Վեդու թիվ 2 հիմնական դպրոց**	Արարատի մարզ	5	1	6	**2.5**	1.304
3	**Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց**	Արագածոտնի մարզ	16	1	5	**3.0**	1.666
4	**Աղավնաձորի միջնակարգ դպրոց**	Վայոց ձորի մարզ	19	1	6	**3.0**	1.113
5	**Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոց**	Սյունիքի մարզ	34	1	5	**3.1**	1.310
6	**Արարատի ավագ դպրոց**	Արարատի մարզ	9	1	5	**3.4**	1.894
7	**Ոսկետափի թիվ 2 ավագ դպրոց**		36	1	6	**3.6**	1.260
8	**Շենավանի միջնակարգ դպրոց**	Արագածոտնի մարզ	13	1	6	**3.9**	1.539
9	**Հրազդանի թիվ 5 հիմնական դպրոց**	Կոտայքի մարզ	47	1	9	**4.0**	2.309
10	**Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց**	Արմավիրի մարզ	49	1	7	**4.0**	2.309

Աղյուսակում ընդգրկված ուսումնական հաստատությունները Շիրակի, Արարատի, Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերից են: Ամենացածր արդյունքներ ցուցաբերած դպրոցների միջին միավորները դիտարկվել են 2-4 միջակայքում: Նշված ուսումնական հաստատություններից միայն Հրազդանի թիվ 5 հիմնական դպրոցի արդյունքներում է դիտարկվել «գերազանց» գնահատական (1 աշակերտ):

Ըստ բնակավայրի տիպի վերոհիշյալ տասնյակի դպրոցներից 6-ը քաղաքային բնակավայրեր են (1-ը՝ խոշոր, 3-ը՝ միջին, 2-ը՝ փոքր քաղաքներից), 4-ը՝ գյուղեր (այդ թվում՝ բարձր լեռնային գյուղի 1 դպրոց):

8.3 Առաջադիմության խմբերի տոկոսները

Դիագրամ 13-ում ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ներկայացված են անգլերենից սովորողների առաջադիմության խմբերի տոկոսները:

Դիագրամ 13. Գնահատականների խմբերի տոկոսները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի



Դիագրամ 13-ից երևում է, որ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցների առաջադիմության խմբերի տոկոսներն ավելի մոտ են միմյանց, վարժարանինը և ոչ պետական ուսումնական հաստատություններինը՝ միմյանց: Ոչ պետական ուսումնական հաստատություններից մասնակցած սովորողների 19.7%-ը և վարժարանից մասնակցածների 28.6%-ը ցուցաբերել են «գերազանց» պատրաստվածություն: Ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներից համեմատաբար լավ ցուցանիշներով են հանդես եկել հիմնական դպրոցներում սովորողները:

9. Ստուգատեսի արդյունքները ըստ սեռերի

9.1 Մասնակցությունը

Դիագրամ 14-ում ներկայացված են աղջիկների և տղաների մասնակցության տոկոսները:

Դիագրամ 14. Մասնակցությունը ըստ սեռի



9.2 Միջին միավորները

Աղջիկների միջին միավորը 10 միավորանոց սանդղակում եղել է 5.07 (ստանդարտ շեղումը՝ 1.803), տղաներինը՝ 5.24 (ստանդարտ շեղումը՝ 1.875):

Դիագրամ 15-ում ըստ սեռերի ներկայացված են միավորների բաշխման հիստոգրամները:

Դիագրամ 15. Անգլերենի սանդղակավորված միավորների բաշխումը ըստ սեռերի



Ինչպես երևում է դիագրամից, 1, 3 և 4 միավորների դեպքում աղջիկների և տղաների թիվը գրեթե հավասար է եղել: 2, 6 և 7 գնահատական ստացածների թվում գերակշռել են աղջիկները, 5 և 8-10 միավորներ ստացածների մեջ՝ տղաները:

10. Վերլուծություն ըստ ստուգատեսի թեստերում ընդգրկված առաջադրանքների տիպերի

Ինչպես նշվել է «Թեստերի կառուցվածքը» բաժնում, թեստերը բաղկացած են եղել ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից: Կարճ պատասխանով առաջադրանքների համար պահանջվել է ընդարձակ կամ ընտրովի պատասխան:

Աղյուսակ 6-ում ըստ առաջադրանքների տիպերի ներկայացված են որակական բնութագրիչները:

Աղյուսակ 6. ԱԱՍ-ի առաջադրանքների տիպերի որակական բնութագրիչները

Առաջադրանք-ների տիպերը	Քանակը	Տոկոսը	Հնարավոր առավելագույն միավորը	Բարդությունը	Տարբերակումը	Կորելյացիան	Հուսալիությունը
Ընտրովի պատասխանով	12	60	12	0.44	0.49	0.81	0.74
Կարճ-ընդարձակ	6	30	21	0.33	0.67	0.94	0.89
Կարճ-ընտրովի	2	10	4	0.61	0.69	0.64	0.64

Աղյուսակից երևում է, որ և՛ ընտրովի, և՛ կարճ պատասխանով առաջադրանքներն ունեցել են միջին բարդություն, շատ լավ տարբերակում և դրական մեծ կորելյացիա: Ընտրովի պատասխանով առաջադրանքների հուսալիությունը միջին է, կարճ-ընդարձակինը՝ ընդունելի, կարճ-ընտրովիինը՝ ցածր (առաջադիանքների փոքր թիվը դրա պատճառներից մեկն է):

11. Վերլուծություն ըստ ստուգատեսի թեստերի բաժինների

ԱԱՍ-ի թեստերում ընդգրկված առաջադրանքները եղել են «Քերականություն», «Բառապաշար», «Շարադասություն», «Տեքստի ընկալում» և «Թարգմանություն» բաժիններից:

Աղյուսակ 7. ԱԱՍ-ի թեստերի բաժինները

Բաժինը	Առաջադրանքների		Հնարավոր առավելագույն նախնական միավորը
	քանակը	տոկոսը	
Քերականություն	6	30	14
Բառապաշար	3	15	9
Շարադասություն	2	10	2
Տեքստի ընկալում	6	30	6
Թարգմանություն	3	15	6
Ընդամենը	**20**	**100**	**37**

Ամենամեծ թվով առաջադրանքները եղել են «Քերականություն» և «Տեքստի ընկալում» բաժիններից (6-ական առաջադրանք):

Ստուգատեսի մասնակիցների գրեթե կեսը «Քերականություն» բաժնի համար նախատեսված նախնական 14 միավորներից հավաքել է 0-ից 3 միավոր: 4-14 միավորների դեպքում մասնակիցների թիվը տատանվում է 2.8-6.2%-ի սահմաններում: Առավելագույն՝ 14 միավոր հավաքել է մասնակիցների 5.6%-ը:

«Բառապաշար» բաժնի համար նախատեսված նախնական 9 միավորներից 0-ից 3 միավոր է հավաքել մասնակիցների 70%-ը: Առավելագույն՝ 9 միավոր հավաքել է 0.1%-ը:

«Շարադասություն» բաժնից մասնակիցների կեսը միավոր չի հավաքել: Առավելագույն՝ 2 միավոր հավաքածները կազմել են մասնակիցների 13.6%-ը:

«Տեքստի ընկալում» բաժնի համար նախատեսված է եղել նախնական 6 միավոր: Մասնակիցների բաշխումն ըստ միավորների գրեթե համաչափ է եղել (12-20.1%): Առավելագույն՝ 6 միավոր հավաքածները կազմել են 6.9%:

«Թարգմանություն» բաժնից նախատեսված նախնական 6 միավորներից մասնակիցների 16.5-22.1%-ը հավաքել է 2, 4 և 6 միավոր:

Թեստերի բաժիններից նախնական միավորների լավագույն բաշխում է ունեցել «Տեքստի ընկալում» բաժինը:

Դիագրամ 16. «Տեքստի ընկալում» բաժնի նախնական միավորների բաշխումը



Դիտարկված 5 բաժիններից ստուգատեսի մասնակիցների հավաքած միջին միավորների դիրքը համապատասխան հնարավոր առավելագույն միավորի նկատմամբ պատկերված է դիագրամ 17-ում:

Դիագրամ 17. Միջին և հնարավոր առավելագույն նախնական միավորները ըստ թեստերի բաժինների



Դիագրամից երևում է, որ յուրաքանչյուր բաժնից ակնկալված միջին միավորին ամենամոտը «Թարգմանություն» և «Տեքստի ընկալում» բաժիններից ստացված միջին միավորներն են:

Թեստերի բաժինների նախնական միավորները դասավորելով աճման կարգով և կապելով ԱԱՍ-ի միջին արդյունքների հետ՝ դիագրամ 18-ում տեսնում ենք, որ բոլոր բաժինների նախնական միավորները ուղիղ համեմատական են գրավոր աշխատանքից ստացված միջին միավորներին:

Դիագրամ 18. Միջին միավորների կապը թեստերի բաժինների նախնական միավորների հետ



Երկու քայլով կատարվող առաջադրանքների և ենթաառաջադրանքների մի մասը եղել է միջին բարդության, իսկ մյուս մասի առաջադրանքների 2-րդ քայլը ԱԱՍ-ի մասնակիցների համար բարդ է եղել:

«Քերականություն», «Բառապաշար», «Շարադասություն», «Տեքստի ընկալում» և «Թարգմանություն» բաժինների նախնական միավորները դիտարկենք ըստ ԱԱՍ-ի մասնակիցների գնահատականների խմբերի:

11.1 Քերականություն

ԱԱՍ-ից «Գերազանց» (9 և 10) գնահատված մասնակիցները հավաքել են 12-14 միավոր: Ընդ որում, 14 միավոր հավաքածները կազմել են նրանց 77.5%-ը:

6-8 գնահատվածները հավաքել են 0-14 նախնական միավորներ, ընդ որում, նրանց 60.2%-ի հավաքած միավորները 10-14 միջակայքում են:

4 և 5 գնահատվածների հավաքած առավելագույն նախնական միավորը 11-ն է եղել: Նրանց 62.4%-ի նախնական միավորը քերականությունից եղել է 1-3 միջակայքում:

«Անբավարար» (1-3) գնահատված մասնակիցները «Քերականություն» բաժնից հավաքել են առավելագույնը 5 նախնական միավոր (հնարավոր 14-ից): Նրանց 47.7%-ը միավոր չի հավաքել, 34.5%-ը հավաքել է 1 միավոր, 14.5%-ը՝ 2:

Ընդհանուր հաշվով, քերականությունից նախնական 10 և ավելի միավոր հավաքածները կազմել են ստուգատեսի մասնակիցների 27.8%-ը, իսկ առավելագույն՝ 14 միավոր հավաքածները՝ 5.6%-ը:

11.2 Բառապաշար

ԱԱՍ-ից «գերազանց» գնահատված մասնակիցները «Բառապաշար» բաժնից հավաքել են 5, 6 և 9 միավոր: 6 միավոր հավաքածները կազմել են 93.3%:

6-8 գնահատական ստացածները հավաքել են 0-6 նախնական միավորներ, և միայն 1 մասնակից (0.1%)՝ 9 միավոր: Ամենաբարձր տոկոսներ ունեն 3 և 6 միավոր հավաքած մասնակիցները (համապատասխանաբար՝ 29.9 և 28.9 տոկոսը):

4 և 5 գնահատվածները հավաքել են 0-ից մինչև 6 նախնական միավորներ: «Բառապաշար» բաժնից նրանց 73.4%-ը հավաքել է 1-3 միավոր:

«Անբավարար» գնահատական ստացած մասնակիցները «Բառապաշար» բաժնից ակնկալված 9 նախնական միավորներից հավաքել են առավելագույնը 3 միավոր: Ընդ որում, նրանց 75.8%-ը միավոր չի հավաքել, իսկ 15.6%-ը հավաքել է 1 միավոր:

«Բառապաշար» բաժնից նախնական առավելագույն՝ 9 միավոր հավաքածները կազմել են ստուգատեսի մասնակիցների 1.2%-ը:

11.3 Շարադասություն

«Շարադասություն» բաժնից բոլոր մասնակիցները հավաքել են ակնկալված 1 և 2 նախնական միավորները:

«Գերազանց» գնահատվածների 73%-ը հավաքել է 2 միավոր, 25.8%-ը՝ 1 միավոր:

«Անբավարար» գնահատվածների 81%-ը, 4 և 5 գնահատվածների 59.4%-ը և 6-8 գնահատվածների 29.5%-ը դրական միավոր չի հավաքել: Այդ խմբերի մասնակիցների գերակշիռ մասը հավաքել է 1 միավոր:

«Շարադասություն» բաժնից նախնական առավելագույն՝ 2 միավոր հավաքածները կազմել են ստուգատեսի մասնակիցների 13.6%-ը:

11.4 Տեքստի ընկալում

«Տեքստի ընկալում» բաժնի առաջադրանքներից ակնկալված առավելագույն նախնական միավորը եղել է 6-ը: ԱԱՍ-ի մասնակիցների 6.9%-ն է այդ բաժնից հավաքել առավելագույն միավոր:

ԱԱՍ-ից «Գերազանց» գնահատված մասնակիցները հավաքել են 4-6 միավոր: 6 միավոր հավաքածները կազմել են նրանց 71.9%-ը:

6-8 գնահատվածները նույնպես հավաքել են 0-6 նախնական միավորներ: Նրանց 65.1%-ի հավաքած միավորները եղել են 3-5 միջակայքում: «Տեքստի ընկալում» բաժնից առավելագույն միավոր հավաքածները կազմել են 6, 7 և 8 գնահատական ստացածների 10.7%-ը:

4 և 5 գնահատվածները հավաքել են 0-6 նախնական միավորներ: Նրանց 71.2%-ի միավորները «Տեքստի ընկալում» բաժնից եղել են 1-3 միջակայքում: Առավելագույն՝ 6 միավոր հավաքածները կազմել են 4 և 5 գնահատական ստացածների 0.9%-ը:

«Անբավարար» գնահատված մասնակիցներն այդ բաժնից հավաքել են առավելագույնը 4 նախնական միավոր: Նրանց 36%-ը միավոր չի հավաքել, իսկ 54.5%-ը հավաքել է 1 կամ 2 միավոր:

11.5 Թարգմանություն

«Թարգմանություն» բաժնի առավելագույն նախնական միավորը եղել է 6-ը: Այդ բաժնից առավելագույն նախնական միավոր հավաքածները կազմել են ստուգատեսի մասնակիցների 22.1%-ը:

ԱԱՍ-ից «Գերազանց» գնահատական ստացածները «Թարգմանություն» բաժնից հավաքել են 5 և 6 միավորներ: Առավելագույն միավոր հավաքածները կազմել են նրանց 96.6%-ը:

6-8 գնահատվածները նույնպես հավաքել են 0-6 նախնական միավորներ: Նրանց 41.7%-ը հավաքել է 6 միավոր, 23.9%-ը՝ 4:

4 և 5 գնահատվածները հավաքել են 0-6 նախնական միավորներ: Նրանց 1/3-ը «Թարգմանություն» բաժնից հավաքել է 2 միավոր, 29.2%-ը՝ 3 և 4 միավորներ: Առավելագույն՝ 6 միավոր հավաքածները կազմել են 4 և 5 գնահատական ստացածների 5.7%-ը:

«Անբավարար» գնահատված մասնակիցներն այդ բաժնից հավաքել են առավելագույնը 4 նախնական միավոր: Նրանց 78.4%-ը միավոր չի հավաքել, 14.9%-ը հավաքել է 1 միավոր:

11.6 Թեստերի բաժիններից ստացված միջին արդյունքների կապը շարադրություն գրելու և թարգմանություն կատարելու տնային հանձնարարությունների հաճախության և աշակերտների ինքնագնահատականների հետ

ԱԱՍ-ի «Աշակերտի հարցաթերթի» «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» և «Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում» հարցերի ենթահարցերի պատասխանների տեսանկյունից կատարվել է ԱԱՍ-ի թեստերում ընդգրկված անգլերենի բաժինների միջին միավորների դիտարկում: Վերոհիշյալ հարցերին որևէ պատասխան չտված աշակերտների միավորները այս բաժնում ներկայացված դիագրամներում ներկայացված չեն:

Հարցման մասնակիցների 4.8%-ը «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» հարցի «Շարադրություն գրել» ենթահարցի պատասխաններից նշել է «Յուրաքանչյուր դասին», 30.9%-ը՝ «Երկու շաբաթը մեկ անգամ», 35.8%-ը՝ «Ամիսը մեկ անգամ» և 11.1%-ը՝ «Երբեք» պատասխանը: Մնացած 17.4%-ը ոչ մի պատասխան չի նշել: Շարադրությունից իրենց կարողությունները «գերազանց» գնահատած աշակերտները կազմել են հարցվածների 11.3%-ը, «լավ» գնահատածները՝ 32.9%-ը, «բավարար» գնահատվածները՝ 29.3%-ը, «վատ» գնահատածները՝ 9.6%-ը: Մնացածները (16.9%) նշում չեն կատարել:

Դիագրամ 19-ում ըստ շարադրություն գրելու տնային հանձնարարության հաճախության ներկայացված են շարադրությունից «գերազանց», «լավ», «բավարար» և «վատ» ինքնագնահատականով աշակերտների թվերը:

Դիագրամ 19. Աշակերտների թիվը ըստ շարադրություն գրելու տնային հանձնարարության հաճախության և շարադրությունից աշակերտների ինքնագնահատականների



Դիագրամից երևում է, որ հարցվածների գերակշիռ մասին շարադրություն գրելու տնային հանձնարարություն տրվել է ամիսը մեկ կամ երկու անգամ:

Քանի որ «Քերականություն», «Բառապաշար» և «Շարադասություն» բաժիններից նշանակալի են եղել «Երկու շաբաթը մեկ անգամ» և «Ամիսը մեկ անգամ» պատասխանները նշածների միջին միավորները, դիագրամ 20-ում ներկայացվել են միայն այդ հաճախությունների հետ կապված միջին ցուցանիշները:

Դիագրամ 20. «Քերականություն», «Բառապաշար» և «Շարադասություն» բաժինների նախնական միջին միավորները ըստ շարադրություն գրելու տնային հանձնարարության հաճախության և շարադրությունից աշակերտների ինքնագնահատականների



Դիագրամում տեսնում ենք, որ ըստ նշված բաժիններից աշակերտների ինքնագնահատականների, երկու շաբաթը մեկ անգամ շարադրություն գրելու տնային

հանձնարարություն ստացածներից «գերազանց» ինքնագնահատականով աշակերտների նախնական միջին միավորները 3 բաժնից էլ եղել են ամենաբարձրը: «Քերականություն» և «Շարադասություն» բաժինների ընդհանուր միջին միավորներին հավասար են այդ բաժիններից «լավ» ինքնագնահատական ունեցած աշակերտների միջին միավորները: Երկու շաբաթը մեկ անգամ վերոհիշյալ տնային հանձնարարությունը ստացածներից «բավարար» ինքնագնահատականով աշակերտների շրջանում նախնական ընդհանուր միջին միավորից բարձր միջին ցուցանիշ է դիտարկվել միայն «Շարադասություն» բաժնից:

Ամիսը մեկ անգամ շարադրություն գրելու տնային հանձնարարություն ստացածներից «Քերականություն» բաժնից «գերազանց» և «լավ» ինքնագնահատականով աշակերտներն այդ բաժնի նախնական ընդհանուր միջին միավորից բարձր միջին արդյունքներ են ցուցաբերել: «Բառապաշար» և «Շարադասություն» բաժիններից դրանց նախնական ընդհանուր միջին միավորներից ցածր միջին ցուցանիշներ են դիտարկվել միայն «վատ» ինքնագնահատականով աշակերտների արդյունքներում:

Ստորև ըստ թարգմանություն կատարելու տնային հանձնարարության հաճախության ներկայացված են թարգմանությունից և տեքստի ընկալումից «գերազանց», «լավ», «բավարար» և «վատ» ինքնագնահատականներով աշակերտներին վերաբերող տեղեկություններ:

Հարցվածների 55.6%-ը «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» հարցի «Թարգմանություն կատարել» ենթահարցի պատասխաններից նշել է «Յուրաքանչյուր դասին», 22.8%-ը՝ «Երկու շաբաթը մեկ անգամ», 4.9%-ը՝ «Ամիսը մեկ անգամ» և 2.9%-ը՝ «Երբեք» պատասխանը: Մնացած 13.8%-ը ոչ մի պատասխան չի նշել: Թարգմանությունից իրենց կարողությունները «գերազանց» գնահատած աշակերտները կազմել են հարցվածների 9.1%-ը, «լավ» գնահատածները՝ 35.6%-ը, «բավարար» գնահատվածները՝ 32.6%-ը, «վատ» գնահատածները՝ 6.3%-ը: Մնացածները նշում չեն կատարել:

Հարցվածների 25.3%-ը «Որքա՞ն հաճախ է ձեր անգլերենի ուսուցիչը հանձնարարում հետևյալ տնային առաջադրանքները» հարցի «Բնագրային տեքստեր կարդալ» պատասխաններից նշել է «Յուրաքանչյուր դասին», 27%-ը՝ «Երկու շաբաթը մեկ անգամ», 14.3%-ը՝ «Ամիսը մեկ անգամ» և 14.4%-ը՝ «Երբեք» պատասխանը: Մնացած 19%-ը որևէ պատասխան չի նշել: Տեքստի ընկալման իրենց կարողությունները «գերազանց» գնահատած աշակերտները կազմել են հարցվածների 20.9%-ը, «լավ» գնահատածները՝ 41.7%-ը, «բավարար» գնահատվածները՝ 20.8%-ը, «վատ» գնահատածները՝ 1.6%-ը: Մնացածները նշում չեն կատարել:

Դիագրամ 21. Աշակերտների թիվը ըստ թարգմանություն կատարելու տնային հանձնարարության հաճախության և թարգմանությունից ու տեքստի ընկալումից աշակերտների ինքնագնահատականների



Դիագրամ 21-ից երևում է, որ հարցման մասնակիցների գերակշիռ մասը տանը անգլերենից թարգմանություն կատարելու հանձնարարություն ստացել է յուրաքանչյուր դասին, իսկ բնագրային տեքստեր կարդալու հանձնարարություն՝ յուրաքանչյուր դասին կամ երկու շաբաթը մեկ անգամ:

Դիագրամ 22. «Թարգմանություն» և «Տեքստի ընկալում» բաժինների նախնական միջին միավորների կապը թարգմանության տնային հանձնարարության հաճախության և թարգմանությունից աշակերտի ինքնագնահատականների հետ



Դիագրամ 22-ից երևում է, որ տանը թարգմանություն կատարելու հանձնարարություն ստացածներից «գերազանց» ինքնագնահատականով աշակերտների նախնական միջին միավորները դիտարկված հաճախությունների դեպքում «Թարգմանություն» և «Տեքստի ընկալում» բաժիններից եղել են ամենաբարձրը:

Աշակերտների ինքնագնահատականների նվազմանը զուգընթաց հիմնականում նվազել են նաև այդ բաժիններից աշակերտների հավաքած նախնական միջին միավորները: «Վատ» ինքնագնահատականով աշակերտների միջին միավորները «Տեքստի ընկալում» բաժնից եղել են ոչ նշանակալի, այսինքն, դրանցում կարող է մեծ լինել պատահականության գործոնի դերը:

Յուրաքանչյուր դասին վերոհիշյալ տնային հանձնարարությունը ստացածների նշանակալի նախնական միջին միավորների տարբերությունը ըստ ինքնագնահատականի ավելի փոքր է եղել, քան երկու շաբաթը մեկ անգամ ստացածներինը: Դրանից կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր դասին տանը թարգմանություն կատարել հանձնարարելը կարող է բարձրացնել աշակերտների՝ տեքստի ընկալման և թարգմանության կարողությունների մակարդակը:

12. Ամփոփում

2016 թ. նոյեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում «Անգլերեն» առարկայից անցկացված ազգային ստուգատեսի նպատակն է եղել պարզել անգլերենի դպրոցական դասընթացից 8-րդ դասարանի աշակերտների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը, դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության չափերը և այդ գիտելիքների կիրառման կարողությունները:

✶ ***Ընդհանուր վիճակագրական տվյալներ:*** ՀՀ 77 հանրակրթական ուսումնական հաստատություններից ստուգատեսին մասնակցել են 2880 սովորողներ: Երևանից մասնակցածները կազմել են ընտրանքի 40.4%-ը: ՀՀ մարզերից մասնակցածների թիվը կազմել է 4.5-ից (Տավուշի մարզ) մինչև 8.9 (Շիրակի մարզ) տոկոս: Մասնակիցների 89%-ը եղել են քաղաքաբնակներ: Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի մասնակիցների մեծ մասը եղել են հիմնական դպրոցների աշակերտները (59%):

Միջին միավորը 10 միավորանոց սանդղակում եղել է 5.2: «Գերազանց» գնահատականներ է ստացել մասնակիցների 3.1%-ը, 6-8 գնահատականներ՝ 40.6%-ը, 4 և 5՝ 39.1%-ը, «անբավարար»՝ 17.2%-ը:

Ընդհանուր միջին միավորից բարձր են եղել, ըստ վարչատարածքային միավորների՝ Երևանի, ըստ բնակավայրի տիպերի՝ խոշոր քաղաքների, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի՝ վարժարանի և ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների միջին արդյունքները:

✶ ***Միջին արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:*** Ըստ վարչատարածքային միավորների վերլուծությունից պարզվել է, որ ընդհանուր միջին՝ 5.2 միավորից բարձր է եղել միայն Երևանից ստուգատեսին մասնակցած աշակերտների միջին միավորը (5.7): Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի մասնակիցների միջին միավորները հավասար են եղել ընդհանուր միջինին: Մնացած մարզերի միջին միավորներն ավելի ցածր են եղել: Ամենացածր միջին միավորը դիտարկվել է Արագածոտնի և Արարատի մարզերում (համապատասխանաբար՝ 4.3 և 4.1 միավոր):

✶ ***Միջին արդյունքներն ըստ բնակվայրերի տիպերի:*** Ամենաբարձր միջին արդյունք են ցուցաբերել խոշոր քաղաքների ուսումնական հաստատություններում սովորողները (5.5): Բնակավայրերի մյուս տիպերի միջին միավորներն այս կամ այն չափով զիջել են ընդհանուր միջին միավորին: Քաղաքային բնակավայրերից ամենացածրը եղել է փոքր քաղաքների միջին միավորը՝ 4.5, իսկ գյուղական բնակավայրերից՝ բարձր լեռնային գյուղերինը՝ 3.0:

✶ ***Միջին արդյունքներն ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի:*** Ըստ ուսումնական հաստատությունների տիպերի ԱԱՍ-ի մասնակիցների 59%-ը եղել են հիմնական դպրոցների, 22.3%-ը՝ միջնակարգ դպրոցների, 13.2%-ը՝ ավագ դպրոցների աշակերտները: Մնացած 5.5%-ը կազմել են ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում և վարժարանում սովորողները: Ամենաբարձր միջին արդյունքներ (7 և 7.6 միավոր) են ցուցաբերել վերջին 2 տիպերի հաստատություններից ստուգատեսին մասնակցած փոքրաթիվ սովորողները: Ամենացածր միջին միավոր (4.8) են հավաքել ավագ դպրոցների աշակերտները:

Ընդհանուրից բարձր միջին արդյունքներով առանձնացել են Կոտայքի և Շիրակի մարզերի ավագ դպրոցների, Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի միջնակարգ դպրոցների, Երևանի և Վայոց ձորի մարզի հիմնական դպրոցների աշակերտները: Երևանի և Արմավիրի մարզի ոչ պետական ուսումնական հաստատությունների սովորողների միջին արդյունքները բարձր են եղել (համապատասխանաբար՝ 7.9 և 6.1 միավոր): Ամենացածրը եղել է Շիրակի մարզից ընտրված ոչ պետական ուսումնական հաստատության սովորողների միջին միավորը (5 մասնակից, միջին միավորը՝ 2.0): Մասնակից միակ վարժարանի ցուցանիշը եղել է ամենաբարձրերից մեկը՝ 7.6:

Միջին արդյունքներով լավագույն տասնյակ կազմած ուսումնական հաստատությունները Երևանից, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերից են, ամենացածր միջին արդյունքներով հաստատությունները՝ Շիրակի, Արարատի, Արագածոտնի, Վայոց ձորի, Սյունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերից:

✶ ***Վերլուծություն ըստ սեռերի:*** ԱԱՍ-ի մասնակիցների մոտ 51%-ը եղել են տղաներ, 49%-ը՝ աղջիկներ: Աղջիկների միջին միավորը եղել է 5.1, տղաներինը՝ 5.2:

✶ ***Վերլուծություն ըստ առաջադրանքների տիպերի:*** Ստուգատեսի թեստերը բաղկացած են եղել ընտրովի և կարճ (կարճ-ընդարձակ կամ կարճ-ընտրովի) պատասխանով առաջադրանքներից, որոնք ունեցել են միջին բարդություն, շատ լավ տարբերակում և դրական մեծ կորելյացիա:

✶ ***Վերլուծություն ըստ ստուգատեսի թեստերում ընդգրկված բաժինների:*** ԱԱՍ-ի թեստերում ընդգրկված են եղել առաջադրանքներ «Քերականություն» (թեստի առաջադրանքների 30%-ը), «Բառապաշար» (15%), «Շարադասություն» (10%), «Տեքստի ընկալում» (30%) և «Թարգմանություն» (15%) բաժիններից:

Ստուգատեսի մասնակիցները լավագույնս պատասխանել են «Տեքստի ընկալում» և «Թարգմանություն» բաժինների առաջադրանքներին: Նրանք դժվարացել են «Քերականություն» և հատկապես «Բառապաշար» բաժինների առաջադրանքների կատարման ժամանակ:

«Թարգմանություն» բաժնի առաջադրանքներն ամբողջությամբ ճիշտ է կատարել ԱԱՍ-ի մասնակիցների 22.1%-ը, «Շարադասություն» բաժնինը՝ 13.6%-ը, «Տեքստի ընկալում» բաժնինը՝ 6.9%-ը, «Քերականություն» բաժնինը՝ 5.6%-ը, «Բառապաշար» բաժնինը՝ 0.1%-ը:

Ստուգատեսից «գերազանց» գնահատականներ ստացած մասնակիցների (ընտրանքի 3.1%-ը) 96.6%-ն ամբողջությամբ պատասխանել է թարգմանության կարողությունը ստուգող առաջադրանքներին, 77.5%-ը՝ քերականության, 73%-ը՝ շարադասության, 71.9%-ը՝ տեքստի ընկալման և 1%-ը՝ բառապաշարի իմացությունը ստուգող առաջադրանքներին:

6-8 գնահատականներ ստացած մասնակիցների (ընտրանքի 40.6%-ը) 41.7%-ն է ամբողջությամբ պատասխանել թարգմանության կարողությունը ստուգող առաջադրանքներին, 21.2%-ը՝ շարադասության, 10.7%-ը՝ տեքստի ընկալման, 7.9%-ը՝ քերականության և 0.1%-ը՝ բառապաշարի իմացությունը ստուգող առաջադրանքներին:

Թեստերի բաժիններից միավոր չի վաստակել մասնակիցների 49.2%-ը՝ շարադասությունից, 20.9%-ը՝ թարգմանությունից, 19.8%-ը՝ բառապաշարից, 12.1%-ը՝ տեքստի ընկալումից և 11.8%-ը՝ քերականությունից:

➲ **Եզրակացություն:** ԱԱՍ-ի միջին արդյունքները, թեև ցածր չեն, այնուամենայնիվ, կարող էին ավելի բարձր լինել: Դա կարող է բացատրվել նրանով, որ հիմնական դպրոցում սովորողների՝ անգլերենի իմացության մոտիվացվածությունն ավելի ցածր է, քան ավագ դասարաններում սովորողներինը, որոնց համար անգլերեն սովորելն ուղղորդված է լինում առավելապես մասնագիտական կողմնորոշմամբ:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում անգլերենից ազգային ստուգատեսի արդյունքները հավաստում են, որ անգլերենի գիտելիքների և դրանց կիրառման կարողությունների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ աշխատանքներ տանելու անհրաժեշտություն կա ՀՀ մարզերի մեծ մասում, հատկապես բարձր լեռնային գյուղերի և փոքր քաղաքների ուսումնական հաստատություններում:

Ընդհանուր առմամբ, գիտելիքների մակարդակի բարձրացման անհրաժեշտություն կա հատկապես «Քերականություն» և «Բառապաշար» բաժինների առումով: